ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ք. Իջևան *27.01.2014թ.*

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2013-2014 ուստարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային ժամանակացույցի հաստատում:

/զեկ. Մ.Ս.Աթոյան/

2. Անվանական կրթաթոշակներ նշանակելու մասին

/զեկ. Ս. Ա. Առաքելյան/

3. Ընթացիկ հարցեր

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 29-ը:
Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:
Տնօրեն Ս. Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտատարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:
Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2013-2014 ուս. տարվա երկրորդ կիսամյակի աշխատանքային ժամանակացույցի հաստատում» հարցի կապակցությամբ լսեցին գիտքարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը: Նա գիտական խորհրդի հաստատմանը ներկայացրեց 2013-2014 ուս. տարվա երկրորդ կիսամյակի գիտխորհրդի ժամանակացույցի նախագիծը:

Արտահայտվեցին – Ուսումնական վարչության պետ Ա. Դավթյանը, տնօրեն Ս. Ա. Առաքելյանը:

Ելույթ ունեցողները հավանություն տվեցին և առաջարկեցին հաստատել գիտական խորհրդի 2013-2014 ուս. տարվա երկրորդ կիսամյակի ժամանակցույցը:

Օրակարգի երկրորդ՝ «Անվանական կրթաթոշակներ նշանակելու մասին» հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանը նշեց, որ ֆակուլտետների խորհուրդները քննարկել և գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացրել անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը:

Գիտխորհրդի հաստատմանն է ներկայացված հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի որոշումները՝ <<Վազգեն Սարգսյան>>-ի անվանական կրթաթոշակի համար «Պատմություն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանող Նարեկ Վիգենի Անտոնյանի, <<Մոնթե Մելքոնյան>>-ի անվանական կրթաթոշակի համար <<Ֆրանսերեն լեզու և գրականություն>> երկրորդ կուրսի ուսանող Հեղինե Վարդանի Մխիթարյանին, <<Շառլ Ազնավուր>>-ի անվանական կրթաթոշակի համար <<Անգլերեն լեզու և գրականություն>> մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի Լուսինե Հրաչի Գևորգյանի:

Տնտեսագիտության ֆակուլտետի խորհրդի որոշումը <<Շավարշ Մարգարյան>>-ի անվան կրթաթոշակի համար <<Տնտեսագիտության տեսություն>> մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի Լուիզա Ռաֆիկի Ալեքսանյանի:

Արտահայտվեցին – Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ն.Բ. Խուդավերդյանը, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ.Ա. Ալեքսանյանը, Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան Ա.Վ. Ցուցուլյանը, Կիրառական արվեստի ֆակուլտետի դեկան Կ. Բ. Այվազյանը: Նրանք, ներկայացնելով վերոհիշյալ ուսանողների առաջադիմությունը և հասարակական ակտիվությունը, առաջարկեցին հաստատել ֆակուլտետների խորհուրդների որոշումները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

1. Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի որոշումը <<Պատմություն>> մասնագիտության երկրորդ կուրսի ուսանող Նարեկ Վիգենի Անտոնյանին 2013–14 ուս.տարվա երկրորդ կիսամյակում նշանակել «Վազգեն Սարգսյան»-ի անվանական կրթաթոշակ՝ երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմուն ունենալու, պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվության համար:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

2. Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի որոշումը «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի Հեղինե Վարդանի Մխիթարյանին 2013–14 ուստարվա երկրորդ կիսամյակում նշանակել «Մոնթե Մելքոնյան»-ի անվանական կրթաթոշակ՝ երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմուն ունենալու, պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվության համար:

ՈՐՈՇԵՑԻՆ

3. Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի որոշումը «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի Լուսինե Հրաչի Գևորգյանին 2013–14 ուստարվա երկրորդ կիսամյակում նշանակել «Շառլ Ազնավուր»-ի անվանական կրթաթոշակ՝ երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմուն ունենալու, պատշաճ կարգապահություն և բարձր հասարակական ակտիվության համար:

ՈՐՈՇԵՑԻՆ

4. Հաստատել Տնտեսագիտական ֆակուլտետի խորհրդի որոշում «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի Լուիզա Ռաֆիկի Ալեքսանյանին 2013–14 ուստարվա երկրորդ կիսամյակում նշանակել «Շավարշ Մարգարյան»-ի անվանական կրթաթոշակ:

Ընթացիկ հարցեր

Լսեցին - ՀՀ ՊՆ Ֆինանսաբյուջետային և պլանավորման վարչություն «Վազգեն Սարգսյան» և «Մոնթե Մելքոնյան» կրթաթոշակների հաստատման վերաբերյալ համապատասխան նամակ ուղարկելու հարցը:

Արտահայտվեցին – գիտական խորհրդի քարտուղար Մ. Աթոյանը, և Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը, իրավախորհրդատու, ԱԿԲ բաժնի վարիչ Ա. Հովհաննիսյանը, ԿՈԱԳ բաժնի վարիչ Ա. Մարգարյանը, գրադարանի վարիչ Ն. Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ

5. ՀՀ ՊՆ Ֆինանսաբյուջետային և պլանավորման վարչության պետ, գնդապետ Վ.Ավետիսյանին ուղարկել նամակ «Վազգեն Սարգսյան» և «Մոնթե Մելքոնյան» կրթաթոշակների հաստատման վերաբերյալ /կցվում է/:

Լսեցին - Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի կազմի փոփոխությունների վերաբերյալ հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ

6. Հաստատել հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի փոփոխված կազմը /կցվում է/ :

Լսեցին - ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գրադարանային խորհրդի ձևաորման, կազմի և կանոնակարգի վերաբերյալ հարցը (կազմը և կանոնակարգի նախագիծը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ

7. Ձևավորել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գրադարանային խորհուրդը, հաստատել ներկայացված կանոնակարգը և գրադարանի խորհրդի կազմը:

Լսեցին - ԵՊՀ ԻՄ ուսանողների պրակտիկաների կազմակերպման և անցկացման կանոնակարգի վերաբերյալ հարցը:/Նախագիծը կցված է/

ՈՐՈՇԵՑԻՆ

8. Հաստատել ԵՊՀ ԻՄ ուսանողների պրակտիկաների կազմակերպման և անցկացման կանոնակարգը:

Լսեցին - ԵՊՀ ԻՄ դասամատյան վարելու կարգի մասին /նախագիծը կցված է/:

ՈՐՈՇԵՑԻՆ

9. Հաստատել ԵՊՀ ԻՄ դասամատյան վարելու կարգը:

Լսեցին - ԵՊՀ ԻՄ իրավական ակտերի նախագծերի մշակամն և փորձաքննության հանձնաժողովի, ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի ընթցիկ մոնիտորինգի/մշտադիտարկման/ և պարբերական վերանայման մշտական հանձնաժողովի և ԵՊՀ ԻՄ մեթոդ խորհուրդի կազմերի փոփոխման վերաբերյալ հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ

10. Հաստատել ԵՊՀ ԻՄ իրավական ակտերի նախագծերի մշակումն և փորձաքննության հանձնաժողովի, ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի ընթցիկ մոնիտորինգի/մշտադիտարկման/ և պարբերական վերանայման մշտական հանձնաժողովի և ԵՊՀ ԻՄ մեթոդ խորհուրդի փոփոխված կազմերը:

Լսեցին - ԵՊՀ ԻՄ մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կանոնակարգի հաստատման հարցը/նախագիծը կցվում է/:

ՈՐՈՇԵՑԻՆ

11. Հաստատել ԵՊՀ ԻՄ մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կանոնակարգը:

Լսեցին - ԵՊՀ ԻՄ էթիկայի հանձնաժողովի կանոնակարգի, /նախագիծը կցվում է/ ԵՊՀ Իմ պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցների էթիկայի նորմերի հաստատման /նախագիծը կցվում է/, և էթիկայի հանձնաժողովի ձևավորման վերաբերյալ հարցերը:

ՈՐՈՇԵՑԻՆ

12. Հաստատել ԵՊՀ ԻՄ էթիկայի հանձնաժողովի կանոնակարգը, ԵՊՀ Իմ պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցների էթիկայի նորմերը, և հաստատել էթիկայի հանձնաժողովը հետևյալ կազմով /կցվում է/:

Լսեցին - ԵՊՀ ԻՄ-ում տրվող ուսանողական կրթաթոշակների ցանկի հաստատման մասին հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ

13. Հաստատել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողներին տրվող անվանական կրթաթոշակների ցանկը համաձայն հավելված 1-ի:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ _____ Մ. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ _____ Մ.Ս. ԱԹՈՅԱՆ

Հավելված 1

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողներին տրվող անվանական

կրթաթոշակների ցանկ

1. «ԵՊՀ» անվանական կրթաթոշակ՝ ԵՊՀ ԻՄ-ում չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմության, հասարակական ակտիվ գործունեության և օրինակելի վարքի համար:
2. «Մոնթե Մելքոնյան» անվանական կրթաթոշակ՝ ԵՊՀ ԻՄ-ում երկու կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմության, հասարակական ակտիվ գործունեության և օրինակելի վարքի համար:
3. «Վազգեն Սարգսյան» անվանական կրթաթոշակ՝ ԵՊՀ ԻՄ-ում երկու կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմության, հասարակական ակտիվ գործունեության և օրինակելի վարքի համար:
4. «Երկրապահ» անվանական կրթաթոշակ՝ ԵՊՀ ԻՄ-ում երկու կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմության, հասարակական ակտիվ գործունեության և օրինակելի վարքի համար:
5. «Շավարշ Մարգարյան» անվանական կրթաթոշակ՝ ԵՊՀ ԻՄ-ի Տնտեսագիտության Ֆակուլտետում երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմության, հասարակական ակտիվ գործունեության և օրինակելի վարքի համար:
6. «Սահակ Զորափորեցի» անվանական կրթաթոշակ՝ ԵՊՀ ԻՄ-ի տնտեսագիտության Ֆակուլտետում երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմության, հասարակական ակտիվ գործունեության և օրինակելի վարքի համար:
7. «Մխիթար Գոշ» անվանական կրթաթոշակ՝ ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների Ֆակուլտետում երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմության, հասարակական ակտիվ գործունեության և օրինակելի վարքի համար:
8. «Գրիգոր Նարեկացի» անվանական կրթաթոշակ՝ ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների Ֆակուլտետում երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմության, հասարակական ակտիվ գործունեության և օրինակելի վարքի համար:
9. «Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակ՝ ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների Ֆակուլտետում երեք կիսամյակ անընդմեջ գերազանց

առաջադիմության, հասարակական ակտիվ գործունեության և օրինակելի վարքի համար:

10. «Շառլ Ազնավուր» անվանական կրթաթոշակ՝ ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների Ֆակուլտետում երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմության, հասարակական ակտիվ գործունեության և օրինակելի վարքի համար:
11. «Համլետ Կարայան» անվանական կրթաթոշակ՝ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների Ֆակուլտետում երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմության, հասարակական ակտիվ գործունեության և օրինակելի վարքի համար:
12. «Սպարտակ Սարգսյան» անվանական կրթաթոշակ՝ ԵՊՀ ԻՄ-ի կիրառական արվեստի Ֆակուլտետում երեք կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմության, հասարակական ակտիվ գործունեության և օրինակելի վարքի համար:

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի
«17» հունվար 2014թ. նիստում /արձ.թիվ /
ԵՊՀ ԻՄ գիտխորհրդի նախագահ
Տնօրեն Ս.Ա. Առաքելյան

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2013-14 ուստարվա
2-րդ կիսամյակի նիստերի ժամանակացույց

№	Հարց	ժամկետ	Պատասխանատու
1	ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2013-2014 ուստարվա 2-րդ կիսամյակի նիստերի ժամանակացույցի հաստատում	հունվար	Մ.Ս. Աթոյան
2	Անվանական կրթաթոշակ նշանակելու մասին	հունվար	Ս.Ա.Առաքելյան
3	ԵՊՀ ԻՄ հեռակա ուսուցման բաժնի 2014-2015 ուստարվա ընդունելության մասնագիտությունների ցանկի հաստատում	մարտ	Ս.Ա.Առաքելյան
4	ԵՊՀ ԻՄ 2014-2018 ուսումնական տարիների /առկա ուսուցման/ և 2014-2019 ուսումնական տարիների /հեռակա ուսուցման/ ուսումնական պլանների կատարման ընթացքի մասին	մարտ	Ա.Յ.Դավթյան
5	ԵՊՀ ԻՄ առկա և հեռակա ուսուցման ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի հաստատում	մարտ	Ս.Ա.Առաքելյան
6	Ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և մաթեմատիկական կրթամասերի առարկաների առարկայական ծրագրերի կազմումը և իրականացումը	մարտ	Ս.Ա.Առաքելյան
7	ԵՊՀ ԻՄ հեռակա ոսուցման բաժնի 2014-2015 ուստարվա ընդունելության մասնագիտությունների ցանկի հաստատում	մարտ	Ս.Ա.Առաքելյան
8	Փոփոխություն ԵՊՀ ԻՄ կառուցվածքում	մարտ	Ս.Ա.Առաքելյան
9	ԵՊՀ ԻՄ 2014-2018 ուսումնական տարիների /առկա ուսուցման/ և 2014-2019 ուսումնական տարիների հեռակա ուսուցման ուսումնական պլանների հաստատում	մայիս	Ա.Յ.Դավթյան
10	ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողով կազմելու մասին	մայիս	Ս.Ա.Առաքելյան
11	ԵՊՀ ԻՄ քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում	մայիս	Հ. Վանյան
12	2014-15 ուստարվա մասնագիտությունների ցանկի քննարկում	հունիս	Ս.Ա. Առաքելյան
13	Կառուցվածքային փոփոխություններ ԵՊՀ ԻՄ կազմում	հունիս	Ս.Ա. Առաքելյան
14	ԵՊՀ ԻՄ զարգացման ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի մասին	հունիս	Ա.Շ. Մարգարյան
15	ԵՊՀ ԻՄ 2014թ. բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում	հունիս	Ս.Ա. Առաքելյան
16	ԵՊՀ ԻՄ ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2014թ. հարցման արդյունքների մասին	հունիս	Ա.Շ. Մարգարյան
17	Ընթացիկ հարցեր		Մ. Աթոյան